



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉԷՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

**Հետազոտության թեման՝ Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի
հոգեբանական զարգացման գործում**

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Ա. Սարգսյան

Ուսումնական հաստատություն՝ Կոտայքի մարզի Մրգաբերի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....	3
Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական զարգացման գործում.....	4
Եզրակացություն.....	14
Օգտագործված գրականության ցանկ.....	15

Ներածություն

Նորագույն տեխնոլոգիաներն արդի ժամանակաշրջանում մեծ դեր և նշանակություն ունեն: Այժմ չկա մի այնպիսի ոլորտ, որտեղ կարելի է արդյունքի հասնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների: Գաղտնիք չէ, որ 21-րդ դարում տեղեկատվական հզոր դաշտի և հաղորդակցման նոր միջոցների առկայության պայմաններում մարդկային կյանքի և ողջ հասարակության համար ստեղծվել է նոր աշխարհ, դրանք թելադրում են կյանքի ընթացքն ու հետագա նանապարհը:

Մարդը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Տնտեսական, քաղաքական, հոգեբանական, բարոյական, կրթական տեսանկյունից տեղեկատվական տեխնոլոգիաների թողած ազդեցության հետևանքները խորն են այնքանով, որ մարդկային կյանքի ոչ մի անկյուն գերծ չի մնացել այդ ազդեցությունից: Ակնհայտ է, որ հետագա զարգացումը կախված է նրանից, թե ինչպես կհաղուցվեն մեդիայի և մարդու, մեդիայի ու մշակույթի, մեդիայի և կրթության հարաբերությունները:

Տեղեկատվական հզոր դաշտի առկայության դեպքում բոլորովին այլ խնդիրներ են դրվում կրթական համակարգի առջև՝ ուղղված տեղեկատվական խոսքի ստավել արդյունավետ վերամշակմանն ու նշված նպատակով համակարգչի օգտագործմանը: Այստեղ մեծանում է ուսուցչի դերի կարևորությունը սովորողի բազմակողմանի զարգացման հարցում: Եթե նախորդ սերունդը գրքերի սերունդ էր, ապա ժամանակակիցը տեղեկատվություն է ստանում տեսանյութերի միջոցով: Կրթական բարեփոխումների արդյունքում ոչ միայն պետք է գիտելիք փոխանցել, այլ նաև պետք է ձևավորել գիտակից քաղաքացու, ով կդիմակայի ժամանակակից աշխարհի մարտահրավերներին:

Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց նորամուծությունների գրեթե անհնար է ապահովել հանրամատչելի և արդյունավետ կրթություն: Այժմ յուրաքանչյուր մարդ անկախ տարիքից հազարավոր թեղերով կապված է համացանցին:

«Տեղեկատվական դարաշրջանում» երեխաները ծնվում են բազմաբնույթ տեղեկատվությամբ ծանրաբեռնված միջավայրում, որ սփռում են տարբեր տեսակի տեղեկատվական տեխնոլոգիաները: Ուստի պետք է խնդիր դնել ոչ թե սահմանափակել երեխային օգտվելու տեղեկատվական տեխնոլոգիաներից, այլ այնքան բարձրացնել երեխայի մակարդակը, որ ինքը կարողանա ընտրել անհրաժեշտ ու պիտանի ինֆորմացիան: Մեր հետազոտական աշխատանքում անդրադարձ կատարենք մանկավարժական տեսանկյունից ֆինարկվող հետևյալ խնդրին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը երեխաների հոգեկան զարգացման գործում: Այսպիսով՝

մեր նպատակն է ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը երեխաների հոգեվիճակի վրա, ինչպես նաև զետեղել նյութեր, որոնք կօգնեն ուսուցչին և ծնողին: Արդյունքում հենվելով համալսարանային փորձի ուսումնասիրության և սեփական հետազոտության վրա՝ ցույց տալ տեղեկատվական տեխնոլոգիաների բացասական ազդեցությունը երեխայի վարքագծի, ուժադրության, ընկալունակության, ինչպես նաև ֆիզիկական զարգացման վրա:

**Նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը և դերը սովորողի հոգեբանական
զարգացման գործում**

SZS-ները ներկայումս ընգրկվել են մարդկանց գործունեության բոլոր ոլորտներում, որոնցից զերծ չէ նաև կրթական ոլորտը՝ մասնավորապես դպրոցը: Տեղեկատվական տեխնոլոգիայի ինտեգրացումը դասապրոցեսին բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը: Այն ուսուցման պրոցեսը դարձնում է ավելի հետաքրքիր, բովանդակալից՝ ներկայացնելով անհրաժեշտ ինֆորմացիան անհրաժեշտ ժամանակին: Նախկինում դժվար էր գտնել անհատական մոտեցում աշակերտի համար: Ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է դիտողականության բարձրացմանը, թույլ է տալիս ուսուցչից աշակերտին գիտելիքների վոխանցման ժամանակ նշանակալից ձևով մեծացնել ուժադրությունը և հիշողությունը: Այժմ դպրոցները տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ստացել են հնարավորություն մատուցելու նոր ինֆորմացիան այնպես, որ բավարարեն յուրաքանչյուր աշակերտի անհատական պահանջները: SZS-ի կիրառմամբ աշակերտների կողմից կատարված հետաքրքիր հետազոտական աշխատանքները թույլ են տալիս ակտիվորեն այն ներգրավել դասապրոցեսի կազմակերպման մեջ:

Այսպիսով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ինտեգրումը ուսումնական գործընթացին անխուսափելի է և դրական նշանակությունը ակնհայտ է, բայց հարց է ծագում, թե որքան արդունավետ և ճիշտ են դրանք օգտագործվում ուսուցման պրոցեսում:

Մանկավարժական տեսանկյունից ֆննարկվում են հետևյալ խնդիրները.

- ուսուցման որակի ապահովում և կրթական բաց համակարգի (բաց կրթություն) կառուցման սկզբունքներ,
- տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները լրացուցիչ կրթության մեջ,
- նոր տեղեկատվական տեխնոլոգիաները՝ որպես ստեղծագործական կարողությունների և մասնագիտական կողմնորոշման միջոց,
- կրթության հոգեբանական, մանկավարժական խնդիրները տեղեկատվական հասարակության պայմաններում,

- տեղեկատվական հասարակության մեջ գլոբալիզացիան և կրթության ու կրթական ծառայությունների ինտեգրումը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների դաստիարակչական ազդեցությունը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունն անհատի մտավոր զարգացման վրա,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունն ու դերը երեխաների հոգեբանական զարգացման վրա և այլն:

Այսօր ժամանակները փոխվել են՝ իրենց հետ փոխելով պահանջներն ու ցանկությունները: Նախկին մանկական խաղերին փոխարինելու են եկել հեռուստացույցը, բջջային հեռախոսը, համակարգիչն ու պլանշետը: Իր ուրույն տեղն ունի նաև համացանցը: Հետաքրքրություններն այսօր փոխվել են և ոչ միայն դեպի դրականը: Այժմ երեխաներին հետաքրքրում են համակարգչային խաղերն ու շփումները սոցիալական կայքերում: Քսանմեկերորդ դարում մանկություն հասկացությունն այլ կերպ է ընկալվում: Այժմ երեխաների մեծ մասն իր մանկությունն անցկացնում է հեռախոսների, համակարգիչների և հեռուստացույցների առջև:

«Տեղեկատվական դարաշրջանի» երեխաները ծնվում են և մեծանում մի միջավայրում, որտեղ օրեցօր զարգանում են տեղեկատվական տեխնոլոգիաները:

Նախադպրոցական տարիքում լայն տարածում է ստանում համակարգչային խաղերի տեխնոլոգիան: Ժամանակակից նախադպրոցականները շատ շուտ են սկսվում շփվել հեռուստացույցի, տեսաձայնագրիչի և համակարգչի հետ:

Կրտսեր տարիքին հատուկ առանձնահատկություններից է հետաքրքրասիրությունը, հուզական բարձր զրգովածությունն ու ընդօրինակումը: Այս տարիքում սիրում են կրկնել ու վերարտադրել մեծերի, հերոսների շարժումները, վարքի ձևերը: Հենց այս առանձնահատկություններն էլ հաճախ առնելով շարունակելով մեր թեման:

Հեռուստացույցը և երեխան .

«Եթե հեռուստատեղիքանը գնդակոծում է տիրաժեշտ ռազմամթերքով անհրաժեշտ մարդկանց, ուրեմն այն լավն է:»

Մարշալ Մաֆկլուեն

Հեռուստացույցը ուսուցողական հզոր գործիք՝ «բարեկամ»

Բոլորիս ընտանիքներում իր ուրույն տեղն է զբաղեցնում հեռուստացույցը:

Հեռուստացույցը մեր կենցաղի անեօրյա ուղեկիցն է: Այն դիտում են թե՛ մեծերը, թե՛ փոքրերը: Հեռուստացույց դիտելը դարձել է հարազատ բան, որ մեկն կասկածի տակ չենք դնում նրա օգտակարությունն այդ րվում նաև վնասակարությունը:

Հեռուստացույցը՝ «ԹՇՆԱՄԻ» - գիտնականները վստահեցնում են, որ հեռուստացույցի առջև երկար նստելը վնասակար է երեխաների համար: Շատերն իրենց ողջ օրն անցկացնում են էկրանի առջև նստած: Ծնողները քաջատեղյակ լինելով՝ ոչ մի կերպ չեն կարողանում երեխային հեռացնել հեռուստացույցից:

Հոգեբաններն ու գիտնականները միաձայն պնդում են, որ հեռուստացույցը ազդում է երեխայի զարգացող նյարդային համակարգի վրա, իսկ դա իր հերթին ազդում է երեխայի վարքի վրա, իսկ դա իր հերթին ազդում է երեխայի վարքի և առողջության վրա: Ըստ գիտնականների, երբ հեռուստացույցն անջատվում է, ուղեղի բետոն ալիքներն իրենց սեղը գիշում են (արթնության) դանդաղ ալիքներին, երբ ֆնում են: Դրա պատճառով մարդը դառնում է ցրված, սեռադրությունն ու լսողությունը բթանում են, իջնում է հանաչողական գործընթացների արագությունը: Հեռուստացույց շատ դիտելուց ակտիվանում է երեխաների աջ կիսագուղը, որը պատասխանատու է զգացմունքային ռեակցիաների համար: Ըստ գիտնականների՝ վտանգավոր է նաև հեռուստացույցը միացրած վիճակում լինելը: Դրանից երեխան դառնում է նյարդային, կովարար և ջղային: Հաճախ երեխան լաց է լինում և դադարում է լսել ծնողներին: Հեռուստացույցը բացասական է ազդում նաև երևակայության վրա:

Զգայարանների ֆիզիոլոգիայի մասնագետ Հորսո Պրենը գրում է. «հեռուստաէկրանի առջև տասը-տասնհինգ ժամ նստած երեխայի ուղեղը նման է անապատի: Այդ երեխաները տառապում են երևակայության լրիվ կորուստով: Որոշ երեխաները ընդունակ չեն նույնիսկ հիշողությամբ բաժակ նկարելու: Ժամանակի հետ այդ կորուստն անդառնալի է դառնում: Պե՞տ է հիշել, որ ժամանակ առ ժամանակ երեխաների համար բարձրաձայն կարգավը նրանց մեջ առաջացնում է ոչ միայն կարգալու ցանկություն, այլև զարգացնում է մտածողությունն ու երևակայությունը: Հեռուստացույցից հրաժարված երեխան ոչինչ չի կորցնում, այլ փրկում է վերը նշված հատկանիշների ձևավորման համար անհրաժեշտ ժամանակը: Եթե արդեն դա ձեռք է բերել, ուրեմն չի խանգարի, որ նա ժամանակ առ ժամանակ հեռուստացույց ևս նայի: Եթե մանկությունը հագեցած է եղել խաղերով ու շարժումներով, երաժշտությամբ ու երևակայությամբ ներքին պատկերներով ու տպավորություններով ծնողները կարող են հանգիստ լինել, որ նրանց սղան կամ աղջիկը կգտնի կյանքի իր սեփական ուղին»:

Գերմանացի Պիտեր Վինտերստայնը ուսումնասիրելով 5-6 տարեկան երեխաներին պարզել է, որ արքան շատ է երեխան ժամանակ անցկացնում հեռուստացույցի առջև, այնքան քիչ դետալներ է օգտագործում նկարելիս, իսկ նկարած կերպարներն էլ անհամաչափ են, նկարները՝ սխեմատիկ ու անկենդան:

Հեռուստացույցն ազդում է նաև խոսքի զարգացման վրա: Հիմա ծնողներն ավելի զբաղված են և խոսելու ժամանակ չունեն: Հեռուստացույց դիտելիս ծնողներն ավելի քիչ են հետևում երեխաներին, քիչ են շփվում և դա նպաստում է, որ երեխան ավելի ուշ սկսի խոսել:

Բուլղարիայում հետազոտություններից պարզվել է, որ նախադպրոցականների 21-27%-ը տառապում է խոսքի խանգարումներով: Դրա հիմնական պատճառը համարվել է ընտանիքներում ահող լուրջությունը, որին նպաստող

ամենաուժեղ գործունը հեռուստատեսությունն է: Հեռուստացույցը խանգարում է կենտրոնանալ և շփվել: Փոքր տարիքում երեխան սիրում է շատ հարցեր տալ: Երեխայի դատողությունն ավելի ուշ շրջանում էլ ավելի է խորանում՝ ձևավորելով վերլուծական, դատողական մտածողություն, որն էլ ձևավորում է բանականությունը: Երեխայի մոտ այս հնարավորությունները նվազում են (6-7), եթե պահանջը չի լրացվում համապատասխան դաստիարակությամբ, ապա հասուն տարիքում ստեղծագործական ունակությունները զարգացած չեն լինում: Սա կարող է շարունակվել նաև սեռահասունության շրջանում: Այս փուլում կարող է կորչել նաև ինտելեկտուալ ներուժը:

Հեռուստացույցն ազդում է նաև երեխայի ուսուցման պրոցեսի վրա: Որքան վաղ հասակից է երեխան տարվում հեռուստատեսությամբ, այնքան սուժում է առաջադիմությունը: Մի շարք հետազոտություններ փաստում են, որ երեխաները, ովքեր գրեթե չեն նայում հեռուստացույց, դատում, մտածում են ավելի ուղիղաբան և նրանց աշխարհընկալումն առավել իրական է, քան հեռուստացույց դիտողինը:

Հեռուստացույց դիտող երեխաներն ավելի քիչ են մասնակցում դասապրոցեսին, ունենում են ինչպես ուշադրության, այնպես էլ կենտրոնանալու խնդիրներ: Հեռուստացույցից կախվածությունը զուգահեռ վերանում է գիրք կարդալու ցանկությունը: Հեռուստացույցը խանգարում է բունը, նպաստում հարպակալմանը: Այն երեխաները, ովքեր չարաշահում են հեռուստացույց, համակարգիչ դիտելն ավելի դժվար են ֆնում, գիշերը հաճախ են արթնանում, մղձավանջներ տեսնում:

Հեռուստացույցն ազդում է նաև մարդու ներգատական համակարգի վրա: Այն նպաստում է ագրեսիայի, բռնության առաջացմանը: Երեխաների հոգեկան կառուցվածքի վրա ազդում է ռեժիսորների կասածելի նորամուծությունները՝ դաժանությունը, արյունը, որն անընդհատ հոսում է հեռուստաէկրաններից, սպանությունները: Այս ամենը ձևավորում են անբնական վերաբերմունք մահի հանդեպ:

Երբ մարդը պարբերաբար նայում է դաժան սցենարներով ֆիլմեր, տեսարաններ, հուզական արձագանքները նման երևույթների նկատմամբ թուլանում են: Երեխան աստիճանաբար սովորում է բռնությանը և սկսում վերարտադրել: Այսպիսով, եթե 30 վայրկյան տևող գովազդն ազդում է մեր տեսակետերի և վարքագծի վրա, կարող ենք վստահ լինել, որ ժամեր շարունակ հեռուստացույց դիտելը նույնպես կազդի:

«Հեռուստատեսության պատկերագարող պատմությունը գրքում գրված է. «Հեռուստացույցը փոխում է մեր մտածելակերպը»: (« A PICTORIAL HISTORY OF TELEVISION »)

Դիտումն ու ընդօրինակումն ամենաարդյունավետ ուսուցման մեխանիզմներից են, այդ պատճառով արժի մտածել, թե երեխաներն ինչ համակարգչային խաղեր են խաղում և ինչ հաղորդումներ դիտում:

Համակարգիչն ու համացանցը: Համակարգիչը երեխայի օգնական (դրական ազդեցությունները)

Լինելով 20-րդ դարի վերջի ամենաբարդ տեխնոլոգիաներից մեկը՝ այն ամենատարածվածներից է, իսկ իր ապագա ազդեցությունների հնարավորությամբ՝ ապահովաբար առաջինը: Երբ մարդկային գործունեության գրեթե բոլոր ձևերը այս կամ այն չափով միջնորդված են համակարգչային սարքավորումներով, այն դադարում է սոսկ հզոր տեխնիկական միջոց լինելուց և դառնում ընկերային կյանքի վրա մեծապես ազդող գործոն, արմատական հասարակական փոփոխությունների գորեղ խթան: Համակարգչի հիման վրա ուսման միջավայր ստեղծելու գաղափարը, որը հետագայում ծավալուն մեակումների առիթ տվեց, ձևավորվեց նաև շնորհիվ երեխայի զարգացման հոգեբանական տեսությունների:

Ըստ Ժ. Պիաժեի մեակած տեսության՝ երեխայի զարգացումն ընթանում է չորս փուլով, որոնցից յուրաքանչյուրում նա բնորոշվում է միանգամայն տարբեր իմացական հետաքրքրություններով ու միջավայրում գործելու եղանակներով: Փուլերից յուրաքանչյուրը երեխայի ուսուցման տարբեր կազմակերպում և տարբեր միջավայր է պահանջում: Ահա այս միջավայրը ստեղծելու առումով է, որ համակարգիչը մեծ հնարավորություններ է խոստանում: Համակարգիչն առաջարկում է նախապես և մեծապես մեակված միջավայրեր, որին ձգտում է մարդու միտքը:

Վերջին տարիներին համակարգիչը դարձավ հասարակական կյանքի բոլոր ասպարեզների անբաժան մասը: Նրանց ի հայտ գալը և կայծակնային տարածումը՝ սոստեսության զարգացման տեսանկյունից, անուշտ, դրական երևույթ է, սակայն համակարգչային տեխնոլոգիաներից օգտվողների թվի աճի և համացանցի ընդլայնման հետ հանդիպում ենք նաև մարդու հոգեկան ոլորտի վրա համակարգչի բացասական ազդեցության երևույթների: Գիտատեխնիկական առաջընթացը նպաստել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը՝ այն դարձնելով կյանքի անբաժանելի մասը: Համացանցը տեղեկատվության անփոխարինելի աղբյուր է ուսումնական և սոցիալիզացման տեսակետից: Համակարգիչն ու բջջային հեռախոսը հնարավորություն են տալիս հաղթահարել մեկուսացումը և ձեռք բերել ընկերներ, խորհրդատվություն ստանալ մասագետից առցանց ֆորումների միջոցով, ստանալ օգնություն, կիսվել սեփական փորձով:

Այսօր երեխան աշխարհը հանաչում է համակարգչի միջոցով՝ խաղեր, մուլտֆիլմեր, նկարներ և այլն: Համակարգիչն ու համացանցն օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են: Տարբեր կենդանիների, հեֆիաթների հերոսների պատկերներն ու նկարները երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի, ինչուների պատասխանները գտնվում են համացանցում: Սակայն համակարգչի գործած «հրաճը» այսօրվում չի ավարտվում: Ոչ միայն հոգեբանները, այլ նաև ծնողներն ու դաստիարակները, որոնք երեխայի հետ զբաղվել են համակարգչով, նկատել են, որ համակարգչային պարապմունքների ընթացքում զարգանում է հիշողությունն ու ուշադրությունը: Եվ դա օրինաչափ է, քանի որ համապատասխանում է երեխայի հոգեկան զարգացման օրինաչափություններին: Մի շարք հոգեբանների հետազոտություններում (Ժ. Պիաժե, Ա. Վալլոն, Պ. Բլանկի) բացահայտվել է, որ նախադպրոցականների կամածին հիշողությունը զարգացած չէ: Այստեղ դարձյալ անփոխարինելի օգնական է

դառնում համակարգիչը, քանի որ նշանակալի է դարձնում յուրացվող նյութի բովանդակությունը, ինչը ոչ միայն արագացնում է կամածին հիշողության զարգացումը, այլ նաև դարձնում է այն ավելի գիտակցված և երկարաժամկետ: Համակարգչային խաղերը մեծ նշանակություն ունեն մոտորիկայի ձևավորման, տեսողական և շարժողական անալիզատորների համատեղ գործունեության կոորդինացիայի զարգացման գործում: Այս բոլոր առավելությունների հետ համակարգիչն ունի նաև բացասական կողմեր:

Համակարգիչը (համացանցը) երեխայի թեմամի (բացասական ազդեցությունները)

Համացանցի լուրջ բացասական կողմերից մեկն այն է, որ այստեղ չի վերահսկվում ինֆորմացիան, չկան տարիքային սահմանափակումներ ու արգելիքներ: Համացանցը լի է անորակ, չհեզորոված ինֆորմացիաներով, էրոտիկ բնույթի նկարներով ու տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն ու գիտակից մեծահասակներին: Չի բացավում, որ երեխաները ևս նմանօրինակ տեղեկատվության հանդիպեն:

Սեռերին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկատվության և տեսանյութերի, անառողջ փոխհարաբերությունների անարգելի ներկայացումը կարող է խեղաթյուրել դեռահասների ու պատանիների սեռական ոլորտի մասին պատկերացումները, բացասաբար ազդել սեռական հասունացման ընթացքի վրա և բացասական հետևանքներ ունենալ տարիքին բնութագրական տվյալ ոլորտի նկատմամբ դրսևորվող գերուշադրության ու հետաքրքրության վրա: Դեռահասների, պատանիների ու երիտասարդների մոտ կախվածություններ են առաջանում սոցիալական ցանցերից, որոնք դարձել են հաղորդակցման այլընտրանքային ձևեր, ծանրության և շփման հասանելի միջոցներ: Եվս մեկ խնդիր է համացանցային այսպես կոչված՝ ժարգոնը կամ լեքսիկոնը՝ բառապաշարը:

Շատ նյութերի, հոդվածների տակ ընդունված է գրել մեկնաբանություններ կամ քննադատներ: Այդտեղ ազատություն է և խառնաշփոթություն, ինչ ասես կարելի է կարդալ (նույնիսկ ցենզուրայից դուրս), որոնք ընդունված չեն սովորական խոսակցությունների ժամանակ: Բայց չէ՞ որ երեխաները բախվում են դրանց, կարդում: Կարող են տարվել նաև «մեծահասակների համար» նախատեսված հայտարարություններով, անպարկեշտ նկարներով, հրավերներով, խաղերով և գովազդներով: Այդ խաղերն ինքնին մի ողջ հիմնախնդիր են բոլորի համար:

Այսօր որոշ երկրներում կան որոնման յուրատեսակ համակարգեր՝ նախատեսված երեխաների համար: Գերմանիայում օրինակ ստեղծվել է **fracFINN** որոնման համակարգը՝ նախատեսված երեխաների համար: Այդ համակարգը ստուգում է և արգելում անպատշաճ բառերը, որոնք բերվում են որոնման ժամանակ: Համակարգում աշխատում են մասնագետներ, գիտնականներ, մանկավարժներ: Այստեղ բացավում է որևէ անպատշաճ կայքի դուրս սպրդումը:

Մարդկությունը բավական շուտ գիտակցեց համակարգչի վնասակար ազդեցությունը մարդու ֆիզիկական առողջության վրա: Սակայն դեռևս քիչ են խոսում մարդու հոգեկան աշխարհի վրա համակարգչի ազդեցության

մասին: Մինչդեռ վերջերս հոգեբույժներն ու հոգեբաններն ակազանգում են մի նոր, ֆիչ ուսումնասիրված հիվանդության՝ համակրագչային հիվանդության մասին:

Միաժամանակ, համակրագչի և համացանցի ազդեցությունը երեխայի հոգեկան զարգացման վրա բացասական հետևանքներ կարող է ունենալ: Նախ համակրագչի առջև շատ ժամանակ անցկացնելու արդյունքում երեխայի մոտ ընդհանուր թուլություն և հոգնածություն է դրսևորվում, ինչպես նաև ֆնի խանգարումներ: Երեխան դառնում է ֆիչ շարժունակ, գրեթե չի գտնվում մաքուր օդում, բնության գրկում, բակային խաղերի փոխարեն՝ գերադասելով շփումը համակրագչի հետ: Նվազում է օրգանիզմի դիմադրողականությունը և բարձրանում է հիվանդությունների հանդեպ հակվածությունը: Զուգից շատ համակրագչի հետ շփումը նպաստում է տեսողության վատացմանը: Բացասական հետևանքները կարող են իրենց հետքը թողնել հոգեկան գործընթացների վրա (մասնավորապես՝ երեխայի հիշողությունն է վատանում, դպրոցում՝ դասերի ժամանակ դժվարությամբ են կենտրոնացնում ուշադրությունը, հասկանում ու դատողություններ անում) հոգեվիճակների, անձնային հատկությունների ձևավորման վրա, միջանձնային հարաբերությունների ուղորտում: Առավել շատ են հանդիպում հուզական խանգարումները, դրդապատճառային ուղորտի ձևավորման բացասական միտումները՝ կապված ինֆորմացիոն ներգործության հետ: Ինֆորմացիոն աշխարհն՝ իր բոլոր դրսևորումներով ազդում է մադու արժեքային համակարգի, արժեքային կոդներուժների ու դիրքորոշումների, նպատակների ու ցանկությունների, երազանքների ու իդեալների ձևավորման, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա: Այսինքն համացանցն ազդում է երեխայի աշխարհայացքի ձևավորման վրա:

Բուռն երևակայության շրջան համարվող մանկական տարիքում համակրագչային խաղերն իրենց գունավոր աշխարհով, հերոսներով, հաղթանակներով հետաքրքիր վիրտուալ մրցակիցներով կարող են ամբողջովին կլանել երեխային: Համակրագչային խաղի ընթացքում երեխաներն ստեղծում են իրականին նման, միևնույն ժամանակ նրանից տարբերվող մի յուրահատուկ աշխարհ, որտեղ հնարավոր է որոնել լուծումներ գտնել, երևակայել և ինֆուորույն կոդներուժել (երբեմն ոչ նիւս):

Շատ ավելի լուրջ հետևանքներ է ունենում այն փաստը, որ շատ խաղերում ագրեսիվ վարքի ձևեր ու մոդելներ են դրսևորվում, ուր երեխաներն առանց գիտակցական վերաբերմունքի ու գնահատականի նմանակման ուժով յուրացնում են: Խաղալով նրանք նույնանում են իրենց վիրտուալ կերպարի հետ՝ դառնալով ագրեսիվ, դյուրագրգիռ, կոնֆլիկտային ու նյարդային: Տուժում են ծնողների հետ հարաբերությունները՝ հատկապես, երբ նրանց փորձում են հեռացնել, կտրել համակրագչից: Արդյունքում կարող է ձևավորվել այն դիրքորոշումը, որ եթե վիրտուալ աշխարհում կարելի է, թույլատրելի է սպանել, կործանել ու ֆանդել, ապա այն կարելի է նաև իրական աշխարհում: Դրանք կարող են նաև մանկական վախերի առաջացման պատճառներից մեկը լինել: Չէ որ երեխան դեռ չի տարբերում վիրտուալն ու իրականը: Մեծ մասամբ երեխաների մոտ հոգեբանական կախվածությունն առաջանում է

դերային խաղեր նկատմամբ: Երեխան իր վրա է ստանձնում համակարգչային հերոսի դերը, այն պարտադրում է հանդես գալ կոնկրետ կամ երևակայող հերոսի դերում: Հենց այս ժամանակ է տեղի ունենում երեխայի ամբողջական, խորը ներգրավումը խաղի մեջ:

Փխնականների վերջին հետազոտությունները ցույց են տվել, որ համացանցը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ զգացմունքների վրա՝ առաջացնելով նույնիսկ հոգեկան հիվանդություններ:

Նյարդաբան Պիտեր Ուայբրուուն համակարգիչներն անվանում է «Էլեկտրոնային կոկային»: Դրանք կարող են մոլագարի հանույժի նույաներ առաջացնել, որոնք ընդմիջվում են դեպրեսիայով:

Ձինացի գիտնականները որոշակի կապ են հայտնաբերել ինտերնետ կախվածության և «գործ բջիջների կառուցվածքային անկանոնությունների» միջև. այսպես՝ ուղեղի ուղարկները, որոնք պատասխանատու են խոսքի ընկալման, հիշողության, ունակությունների, զգացմունքների և այլնի համար 10-20% փոքրանում են: Ընդ որում՝ քայքայումն այդպիսով չի դադարում՝ որքան շատ ժամանակ է մարդ անցկացնում համացանցում, այնքան ավելի ուժգին կերպով է հյուսվում նրա ուղեղը, այնքան ավելի է ընկնում տրամադրությունը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունն ու դեմ առ դեմ հաղորդակցությունը:

Երեխաները կարող են աստիճանաբար ընդունել համացանցային կամ երևակայական աշխարհը՝ որպես առաջնային և կենսաբանական խնդիրների լուծումները՝ փնտրել իրականությունից կտրված եղանակներով: Համակարգչային կախվածությունն անչափահասների շրջանում կարող է հանցավոր վարքի (արատավոր ցանկություններ, կասկածամտություն, ստախոսություն, հակամարտություն և այլն) դրսևորման պատճառ դառնալ, առաջացնել լքվածության, տագնապի զգացում:

Դրանցից բացի հոգեբանական նախադրյալների մեջ նշվում է ցածր իմնագնահատականը, համակարգչային խաղի ընթացքում սեփական վարքը վերահսկելու անկարողությունը, որոշումների կայացման պատասխանատվությունն ուրիշների վրա թողնելու, կատարած սխալներն արդարացնող փաստարկների որոնումը:

Ի՞նչ ազդեցություն ունի բջջային հեռախոսը.

Մինչև վերջին ժամանակները պաշտպանական հաղորդագրություններում նշվում էր, որ բջջային կապի սարքերը բացարձակապես անվնաս են դրանցից օգտվողների համար և լիավիճակում համապատասխանում են բոլոր անհրաժեշտ չափանիշներին: Սակայն վերջին տասնամյակում առաջավոր բժշկական կենտրոններում ուսումնասիրվում է բջջային հեռախոսներից արձակվող հառագայթների ազդեցությունը մարդկանց առողջության վրա: Օրեցօր մեծանում են բջջային հեռախոսներից օգտվողների մետաղական գանգատները գլխացավերից, ականջանցավերից, մաշկի զրգուրաններից, տեսողության խանգարումներից և սրտխառնոցից: Բջջային հեռախոսների մասին պրոֆեսոր Ռ. Էյդեն գրում է. «Պատմության մեջ առաջին անգամ մենք մեր ականջին պահում ենք հզոր ռադիոընդունիչ: Նկատի ունեցե՛ք,

որ այդ հաղորդիչը գլխուղեղից գտվում է 25 սմ հեռավորության վրա: Որպես կանոն՝ շատ ֆչերն են հակված գերհոգնությունը, ֆնկոտությունը, գրգռվածությունը, նյարդայնությունը, մրսածությունը և հաճախակի դարձած վարակիչ հիվանդությունները, գլխացավը, աչքերի սուր ծակող ցավերը կապել բջջային խոսակցություններին»:

Բջջային հեռախոսները հատկապես վտանգավոր են երեխաների համար: Կապ է հաստատված բջջային հեռախոսներից օգտվող մարդկանց և նրանց գլխուղեղում ուռուցքների առաջացման միջև: Այդպիսով՝ հեռախոսներով օգտվողների շրջանում ուռուցքներով հիվանդանալու հավանականությունը մեծանում է 70%-ով: Մոտավորապես 3 անգամ մեծանում է լսողական նյարդի բարորակ ուռուցքով հիվանդանալու ռիսկը, հատկապես այն ականջի կողմում, որով սովորաբար խոսում են հեռախոսով: Դիտվել է նաև արյան տարրերի ԴՆԹ-ի փայլալուծ: Բջջային հեռախոսների ամենօրյա օգտագործման դեպքում վտխվում են գրեթե բոլոր ներքին օրգանների գործառական վիճակը:

Բջջային հեռախոսների հառագայթների ազդեցության աստիճանը կախված է դրանցից արձակվող ազդանշանի հզորությունից: Այս հեռախոսների հառագայթման առավելագույն ուժը դրսևորվում է կանչի ժամանակ: Անգամ չմիացած վիճակում կամ գոտկատեղին ամրացված սարքը մշտապես կապի մեջ է մոտակա բազային կայանի հետ և հետևապես արձակում է էլեկտրամագնիսական ալիքներ:

Հեռախոսից գրագիտորեն օգտվելու դեպքում վտանգի աստիճանը կարելի է նվազեցնել այնպես, ինչպես գազից, էլեկտրականությունից, ավտոմոբիլից օգտվելիս: Ներկայումս ծավալուն աշխատանքներ են տարվում, որպեսզի նվազեցնեն հեռախոսներից արձակվող միկրոալիքային հառագայթները: Միայն ժամանակիկ նախագգուշական միջոցների կիրառումը կարող է նվազեցնել այն հիվանդությունների ռիսկը, որոնք առաջանում են բջջային հեռախոսների միկրոալիքային հառագայթների ազդեցությամբ:

Ինչպե՞ս են բջջայիններն ազդում մեր երեխաների վրա.

Վերջին մի քանի տարիներին բջջային հեռախոսները «գրավել են» միջնակարգ և նույնիսկ՝ նախակրթական դպրոցների միջանցքները: Դրանք ինֆնատիվ ապահովագրության ձև են դարձել ծնողների համար և միևնույն ժամանակ թմրամիջոց՝ երիտասարդների համար: Դպրոցականները բջջային հեռախոսները հիմնականում օգտագործում են խաղերի և ընկերների հետ շփման համար: Ամենից հաճախ օգտվում են SMS ծառայություններից և ներդրված տեսախցիկից: Դա նրանց համար խաղային սարք է, որը ինտուիտիվ կերպով օգտագործվում է մյուսների հետ կապ ստեղծելու համար, այդ թվում՝ բջջայինի միջոցով ինտերնետի օգտագործումը: Այն երեխայի մեջ վերացնում է միայնության զգացումը՝ օգնելով խուսափել սթրեսից, երբ նա հանկարծ դպրոցական օրվա ավարտին մենակ է հայտնվում տանը: Հեռուստացույցը նույնպես «զայակի» դեր է կատարում, սակայն բջջայինն ավելի շատ հաղորդակցական ու ինտերակտիվ որակներ ունի: Մասնավորապես՝ խաղային ու սենսորային միջոցները (ինչի

համար միայն տեսողություն, լսողություն և հպում է պահանջվում) հնարավորություն են տալիս շատ արագ մարսել և ստանալ տեղեկատվությունը՝ առանց դեղուկտիվ մտածողության անհրաժեշտության: Այս երևույթի հետևանքներն անմիջապես ի հայտ են գալիս նաև դասարանում. նահանջ է նկատվում առավելագույն ջանքերի պահանջի դեպքում, դժվարություններ են առաջանում գիտելիքի և փորձի կապը հաստատելիս, ցրվում է ուշադրությունը, և աշակերտը սկսում է կորցնել կենտրոնանալու ունակությունը, ինչպես նաև նվազում է հետաքրքրությունը վերացական, առօրյա կյանքին շտանշվող գիտելիքների նկատմամբ և այլն: Ոմանց համար բջջային սարքավորումներն ինքնարտահայտման միջոց են: Առանց այդ առարկայի նրանք միայնություն ու դատարկություն են զգում: Ուստի, դպրոցներում բջջային հեռախոս օգտագործելու արգելք կարող է «լվիվածության» զգացում առաջացնել, ինչի հետևանքով հատկապես դեռահասը կարող է ինքնամիտի դառնալ ու մեկուսանալ աշխարհից: Բջջայինի կարիք հեկնց ծնողներն ունեն, որոնք կարծում են, թե իրենց զավակների կողմից են գտնվում՝ չնայած որ դա այդպես չէ: Նրանք չեն գիտակցում, որ այդ առարկան խանգարում է երեխային «մեծանալ», ինչն էլ, իր հերթին, նշանակում է տարբեր իրավիճակներում ինքնուրույն որոշումներ կայացնել: Եթե երեխան գիտի, որ կարող է ցանկացած պահի, նույնիսկ ամենահասարակ հարցով զանգահարել ծնողին, ապա դա միանշանակ կախվածություն է առաջացնում. արդյունքում՝ բջջայինը կարող է հանգեցնել մանկամոտության: Մյուս կողմից, հեռախոսի օգտագործումն ունի իր առավելությունները՝ մասնավորապես երիտասարդների համար: Դա վերաբերում է դեռահասներին, իհարկե, չափավոր օգտագործման դեպքում (օրինակ՝ ոչ գիշերը): Այն օգնում է կապ հաստատել հասակակիցների և ընկերների հետ, ինչպես նաև կենսավորած ձեռք բերել՝ պայմանով, որ ծնողների հետ հարաբերություններն աստիճանաբար այնպիսի կետի հասնեն, որ երեխան ֆիզիկապես հնարավորություն ունենա առանձնանալ նրանցից: Գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ 1-3 տարեկան երեխաների՝ հեռուստացույցով, բջջայինով ու այլ գաջեթներով տարվելը 7 տարեկան հասակում կարող է հանգեցնել ուշադրության կենտրոնացման խնդիրների: Ինֆորմացիայի մեծ հոսքի պատճառով նրանք չեն կարողանում ընկալել ու հիշել: Փոքրիկ երեխայի ուղեղը ծնված օրից մինչև երկու տարեկան երեք անգամ մեծանում է չափսերով և շարունակում անել մինչև 21 տարեկանը: Վաղ շրջանում ուղեղի զարգացմանը նպաստում է շրջակա աշխարհը: Իսկ այս տարիքում երեխայի զարգացումը գաջեթների վստահելու դեպքում բալիկների մոտ նկատվում են կոգնիտիվ ուշացումներ, բարձր իմպուլսիվություն, ինքնակառավարման ունակության թուլացում:

Երեխաներին չափից շուտ հեռախոսներ տալը, եթե խիստ անհրաժեշտությունը չկա, խրախուսելի չէ: Երեխայի համար դա հաճախ ոչ թե շփման միջոց է, այլ մեծերին նմանվելու, ինքնահաստատման փորձ: Վատ է, երբ երեխայի ինքնահաստատումը հիմնվում է ոչ թե հավաստի, հոգևոր արժեքների հիմքի, այլ բջջային հեռախոսի, համակարգչի կամ նյութական հիմքի վրա:

Որպես վերջաբան ներկայացնենք Քրիս Ռուսենի առաջարկած աղյուսակը, որտեղ նշված է տարբեր տարիքների երեխաների համար գաջերներով զբաղվելու թույլատրելի ժամափանակը:

Developmental Age	How Much?	Non-violent TV	Handheld devices	Non-violent video games	Violent video games	Online violent video games and or pornography
0-2 years	none	never	never	never	never	never
3-5 years	1 hour/day	✓	never	never	never	never
6-12 years	2 hours/day	✓	never	never	never	never
13-18 years	2 hours/day	✓	✓	limit to 30 minutes/day		never

Մեդիագրագիտություն

Մեդիակրթությունը և մեդիագրաստիարակությունը դարձել են դարի հրամայական:

Բոլոր զարգացած երկրներում առաջնային տեղ է հատկացվում մեդիագրագիտությանը, որը մարդկանց տալիս է ինֆորմացիայի սինթեզի, քննադատաբար գնահատման և վերլուծություն կատարելու հմտություններ:

Մեդիագրագիտությունը անհրաժեշտ է բոլորին, մասնավորապես՝ դպրոցահասակ երեխաներին: Եթե նախադպրոցական կամ կրտսեր դպրոցական տարիքի երեխանը ինչ-որ չափով վերահսկվում են ծնողների կողմից, ապա հիմնական և ավագ դպրոցի սովորողները առավելապես ազատ են իրենց ընտրությունների և որոշումներ կայացնելու հարցում, հետևապես այստեղ է անհրաժեշտ մեդիագրաստիարակությունը: Մեդիագրագետ ֆադաֆացին ունի բարձր գիտակցված մակարդակ, իր գործողություններում ավելի վստահ է, ցանկացած իրավիճակում կարողանում է արագ կողմնորոշվել և տեղեկատվական հոսքերից ֆադել այն, ինչ իրեն պետք է և օգտակար: Այս հարցում մեծ անելիքներ ունի ժամանակակից դպրոցի ուսուցիչը:

Ուսուցիչը ամենօրյա մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ իր առարկաներին ինտեգրելով մեդիագրագիտության տարրերը, կկարողանա դաստիարակել առողջ քննադատություն ունեցող սերունդ: Մեդիագրագետ սերունդը, հետևելով տեղեկատվական տեխնոլոգիաներից ճիշտ օգտվելու կանոններին, կարող է խուսափել մի շարք խնդիրներից:

Եզրակացություն

Բոլոր տեխնոլոգիաները, որոնք կատարվել են ապագայում, կկոչվեն երրորդ հազարամյակի կամ էլ XXI դարի տեխնոլոգիաներ: Այսպիսով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումն ու ազդեցությունը երեխայի հոգեբանական զարգացման մեջ կարող է և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն ունենալ:

Դպրոցական տարիքի երեխաների հետ աշխատելիս մենք պիտի հիշենք մի՛ վնասիր պատվիրանը:

Հետևաբար վերը նշված խնդիրները պահանջում են բոլորի զգոնությունն ու ուղադրությունը՝ փլիլիստիաների, սոստեսագետների, հոգեբանների, սոցիոլոգների, ֆաղափական գործիչների և իհարկե մանկավարժների: Փոխակերպված միջավայրում, որտեղ երեխաներին մատչելի են նորաճող ծառայություններ ու փորձառություններ՝ նրանք մեծանում են ծնողներից տարբերվող ձևերով:

Սա դառնում է պատճառ խզումների մեծահասակների ու երեխաների, ծնողների ու գավակների, ուսուցիչների ու սովորողների այսօրվա սերունդների միջև:

Ժամանակակից տեխնոլոգիաների նեոման տակ երեխային հոգեբանության փոփոխությունները կարող են հանգեցնել լուրջ հետևանքների թե՛ իրենց և թե՛ նրանց ծնողների համար: Տեղեկատվությամբ հեղեղված հասարակության մեջ տեխնոլոգիայի և մշակույթի միջև հարաբերությունները դուրս են եկել մեծահասակ սերունդի հսկողության շրջանակից:

Պատմության ընթացքում կատարված մեծ փոփոխությունների ժամանակ՝ երեխաները կլինեն գալիք տարիների շահողները կամ գոհերը: Շատ բան, այդ թվում՝ նրանց դժվարությունները կախված կլինեն նոր միջավայրի հարմարվելու նրանց կարողությունից: Եթե մենք այսօր ի վիճակի լինենք հասկանալու այս փոփոխությունների բնույթն ու միտումները գուցե և կարողանանք կայացնել մեր երեխաների ապագայի հետ կապված լավագույն վիճակները:

Այսպիսով՝ տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է օգտագործել հօգուտ երեխայի՝ մշակելով այնպիսի ուզմանակարգություն, որ թույլ տա օգտվել նոր ժամանակների ընձեռած լավագույն հնարավորություններից՝ զերծ մնալով վնասակարից: Ուստի, մեդիագրագիտությունը կարևոր նախապայաման է կիրթ և լիարժեք հասարակություն ունենալու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա.Ա., «Մանկավարժական հոգեբանության հարցեր», Երևան: Լույս 1983
2. Միրաֆյան Վ. «Ազդեհիվ հեռուստատեսություն» հետևանքները

3. Кучинский С.М., Психология внутреннего диалога. Минск 1988
4. Նալչադյան Ա. Ա. «Հոգեբանության հիմունքներ» Երևան 1997
5. Наталья Геннадьевна Мякинник., «Компьютер в жизни детей и подростков: польза или вред?» Абульханова Славская КА - стратегия жизни, М.: 1991
6. Մանուկենկո Վ. «Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում»
7. Մերդական ձեռնարկ «Դեռահասների առողջություն և զարգացում» Երևան 2014